Զապել Եսայան

Նամակ Մելինե Գովանճյանին

1922, ապրիլի 25, Բարիզ

Մելինե Գովանճյանին

Ինչպես մտադիր էի՝ անցյալ ուրբաթ օր մեկնեցա Պրյուքսելեն և հանգիստ հասա Բարիզ:

Անմիջապես մտադրեցի Ձեզ գրել, բայց դիզված գործերը և երկուշաբաթն ի վեր անպպտասխան մնացած նամակները ինձ հարկադրեցին քիչ մը ուշանալ Ձեզ անգամ մըն ալ հայտնելու իմ շնորհակալություններս այն ջերմ ընդունելության համար, որ ըրիք ինձ Անվերսի մեջ: Վստահ եղեք սիրելի օրիորդ, որ միշտ մեծ հաճույքով պիտի հիշեմ Ձեզ մոտ ունեցած օրերս և եթե առիթը ներկայանա կրկին Ձեզ տեսնելու, շատ ուրախ պիտի ըլլամ:

Մեզ պես մարդոց համար, որ առիթ ունին հազարավոր մարդեր տեսնելու, առավել ևս հայտնի ճշմարտություն է, թե շատ հազվադեպ բան է գեղեցիկ հատկություններով օժտված անձերու հանդիպելու և երբ այդ բարեբախտությունը կունենանք, վստահ եղեք, որ տարօրինակ հանգստություն մը կունենանք և նաև հավատք ապագայի վրա: Դուք այն անձերեն մեկն եք, որ այդ զգացումը կներշնչեք:

Արդարև պետք Է ունենաք ներքին և բարոյական շատ մեծ ուժ, որպեսզի այդքան թիվով քիչ գաղութի մը մեջ Ձեր ոգևորությունը և եռանդը պահեք: Շատ ուրախ եղա Ձեզ ծանոթանալուս և հույս ունիմ, որ մոտիկ ապագային առիթ կունենանք միասին աշխատելու մեր խեղճ և բարի ժողովուրդին համար:

Կխնդրեմ Ձեր մայրիկին հայտնեք իմ հարգանքներս և ջերմագին բարևներս Ձեր քույրերուն և ազգականներու: Գոհ կըլլամ, եթե երբեմն ինձ գրեք և տեղյակ պահեք Ձեր գաղութին գործերուն, նույնպես՝ եթե կարծեք, թե ոևէ բանով կրնամ Ձեր ձեռնարկած գործերուն օգտակար ըլլալ, կխնդրեմ ինձ համարեք Ձեզ անձնվեր և ընդունեք այս առթիվ իմ լավագույն զգացումներս:

Ջապել Եսայան